ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«17» հոկտեմբերի 2016թ. N 92

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 20 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 23-ի N295-Ա և Հայաստանի Հանրապետության թիվ 21 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 23-ի N161-Ա որոշումները, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2016 թվականի հոկտեմբերի 10-ի N01/16.1/4189-16 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արգավանդ և Մյասնիկյան համայնքներում համայնքի նոր ղեկավարների ընտրության կապակցությամբ համայնքապետարաններում ընդունման-հանձնման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ա. Մարտիրոսյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել տասն աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ. Կարապետյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հոկտեմբերի 19-ից:

ՄԱՐԶՊԵՏ՝ *Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2016 թվականի հոկտեմբերի 27-ի
N 92 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Մարտիրոսյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ.

Անդամներ՝

Գ. Գևորգյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՀԳՄ տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ.
Ա. Դարբինյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ.
Լ. Հարությունյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբական բաժնի գլխավոր մասնագետ.
Կ. Պետրոսյան	-Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ:

Հանձնողներ՝

Արգավանդ համայնքի նախկին ղեկավար՝ Արշակ Աղաջանյան
Մյասնիկյան համայնքի նախկին ղեկավար՝ Անդրանիկ Պետրոսյան

Ընդունողներ՝

Արգավանդ համայնքի նորընտիր ղեկավար՝ Արշավիր Աղաջանյան
Մյասնիկյան համայնքի նորընտիր ղեկավար՝ Տիգրան Բաղդասարյան:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ***Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***